

## ԳԼՈՒԽ Թ

Ճընի՝ կ'անցնի եւ կը հասնի ամենայն  
ճակատագրին իւր անորոշն ի սահման.  
Առ օւկեան՝ տըխուր ալիք,  
Քամուոյն՝ տերեւ փախուսիկ,  
Լոյսն՝ իրիկուան եւ մարդ՝ մահուան:  
Սակայն ում փոյթ, ո՛յ սիրելիս,  
Մեր օրերուն չափն անծանօթ.  
Միայն հանդարտ թող ի հալիս  
Եւ յարահետ անուշահոտ  
Ըզմեզ վարէ սուր ժամանակ:

## ԼԱՄԱՐԹԻՆ

Ամենքը զարմանքով կը նայէին այդ չոր՝ բարձրահասակ ծերուն վրայ, որ շարունակ կը շրշեր եւ միշտ դռան կը նայեր սպանելով աղջկայ մը, նա, որ աշխարհքիս բոլոր մարդկանց համար անտարբեր էր. ամէն ցաւ, ամէն թշուառութիւն, ամէն սեր, ամէն զգացմունք իբր թէ ոչինչ էին իրեն համար: Իսկ երբ Ռշտունեաց գեղահասակ Օրիորդը ներս մտաւ եւ տեսաւ հինգ վեց պատկառելի իշխանագուն մարդիկ, որոց ամենէն երիտասարդը քառասունն անցած էր, եւ ամէն աչք իրեն կը նայէին, ինք որ միայն հայրը եւ Ատոմը կարծեր թէ պիտի գտներ փափուկ կարմրութիւն մը եկաւ երեսին եւ իւր գեղեցկութեան աւելի փայլ մը տուաւ. բայց առանց շփոթելու գնաց դէպի ծերունին եւ ձեռքը պագաւ, իսկ նա երկու երկայն թելերով գոկելով Օրիորդը՝ «Թենի՛, Թենի՛, ինչպէս ես, որդեակ Թենի», կ'ըսեր եւ կրկին կը համբուրեր: Յիրաւի, զարմանալի հակառակներ կը կազմէին այդ երկու կերպարանքը. այդ մագաղաթեայ դեղնած կնճոտած երեսները, այդ ձիւնի պէս ճերմակ մազերն ու մօրուքը, այդ ցցուեալ ոսկորներով կաշիէ մը պատեալ մարմինը մէկ կողմէն, եւ միւս կողմէն գողտրիկ վարդափթիթ երեսներ, լուսաւիր նշածեւ աչքեր, սեւ-սեւ յօնքեր եւ մազեր, ձիւնափայլ պարանոց մը եւ վայելուչ հասակ:

Ճերը քանի մը անգամ նոյն հարցմունքը կրկնեց, իսկ Օրիորդը կամաց ձայնով շնորհակալութիւն եւ լաւութիւն իմացուց, եւ երբ կերպէն հասկցաւ թէ կուզէ քաշուիլ՝ ձեռքն առաւ՝ «Եկ, Թենի, քեզ հետ քիչ մը աս պարտեզն երթանք եւ խօսինք, ձմեռուան արեւը առողջարար է»,— ըսաւ, ու դուրս ելան: Այս